ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անգլերեն

(առարկա)

ԹԵՄԱ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Կազմեց՝ ՍՈՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ

(անուն, ազգանուն , հայրանուն)

ԿԱՊԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(դպրոցի անվանումը)

<< Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(Վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ՂԵԿԱՎԱՐ՝ ԹԱԳՈՒՀԻ ՂՈՆՅԱՆ

Կապան 2 0 2 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն --- 3

ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

1. 1 Անգլերենի դասաժամին սովորողների լեզվամտածողության զարգացումը համագործակցային ուսուցման միջոցով --- 6

1.2 Խմբային քննարկումների դերը սովորողների սոցիալական ունակությունների զարգացման միջոցով --- 12

Գլուխ 2 <<Սեփական փորձ, Դասի պլաններ դասավանդման համագործակցային մեթոդի կիրառմամբ>> --- 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---- 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ ---- 20

<<Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության>> Ջեյմս Ուայթսոն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը լիիրավ ինտեգրվել է համընդհանուր տնտեսությանը, տարածաշրջանային քաղաքականությանը և համընդհանուր ջանքերին՝ իր քաղաքացիների կյանքի պայմանները բարելավելու և խաղաղությունը պահպանելու ու զարգացնելու նպատակով: Հայաստանի դպրոցներն ու ուսուցիչները այսօր առնչվում են միանման խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար:

Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Այս համատեքստում առաջնային խնդիր կարելի է դիտարկել ուսուցչի կողմից սովորողների մի շարք առանձնահատկությունների բացահայտումը որոնց հենքի վրա պիտի կառուցվի ուսումնական գործընթացքը: Այդպիսի առանձնահատկություններից են.

…Սովորողի ուժեղ և թույլ կողմերը;

…Տարիքային և անհատական առանձնահատկությունները;

…Ուսման նկատմամբ վերաբերմունքը;

…Սովորելու մոտիվացիա;

…Օժտվածությունը

…Կրթական առանձնահատուկ կարիքները։

Այս ամենը հաշվի առնելով ուսուցիչը պետք է ընտրի ուսումնական գործընթացը կազմակերպելու այնպիսի եղանակներ, որպեսզի կարողանա բավարարել բոլոր սովորողների կարիքները։ Ուստի ուսուցչի դերը որպես ուսուցումը կազմակերպող, համակարգող, սովորողին առաջնորդող, շատ կարևոր է։

Ուսումնական գործընքացում գիտելիքի հաղորդման զուգահեռ կարևոր բաղադրիչ է նաև սովորողների լեզվամտածողության սոցիալական ունակությունների զարգացումը։ Այս ճանապարհին բավականին արդյունավետ է կիրառել խմբային աշխատանքներ քննարկումներ։ այս մոտեցումը թույլ կտա սովորողին իրեն ազատ զգա, ինտեգրվի դասապրոցեսի մեջ, շփվի համագործակցային հարաբերություններ հաստատի ընկերների հետ։

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների /համագործակցային հմտություններ կիրառողներ/ և գիտելիքների ակտիվ կիրառողներ / մտածողության հմտություններ կիրառողներ/ ձևավորելը։

Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը /ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտությունների կիրառումը/։

Հետազոտության թեմայի արդիականությունը։ Թեմայի արդիականությունը պայմանավորված է սովորողի լեզվական մտածողության զարգացման, սոցիալականացման, ինքնուրույնության զարգացման մարտահրավերներով։

Հետազոտության նպատակը։ Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն։

Հետազոտության խնդիրը։ Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները։

ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

1. 1 ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ուսումնական գործընթացում ուսուցիչների աջակցությամբ սովորողները համակարգված համալրում են իրենց գիտելիքները տիրապետում են մարդկային մտքի ձեռքբերումներին ազգային բարոյական արժեքներին: Ուսուցչի հիմնական առաքելությունն է սերմանել սեր ուսման նկատմամբ խթանել նրանց հետաքրքրություններն նորի անհայտի նկատմամբ սովորեցնել սեփական վարքն ու հույզերը կառավարել, ինչպես նաև ձևավորել առողջ մտքով և հոգով սերունդ:

Ժամանակակից ուսուցիչը պետք է նախ և առաջ ինքը պետք է զինվի կրթական համակարգին բնորոշ կարողունակություններով, սկսի վերանայել իր մոտեցումները ուսումնական գործընթացի մասին, որպեսցի կարողանա բարելավել նոր սերնդի կրթական պահանջմունքները: Ստացվում է, որ ուսուցիչը պետք է

♣սովորողին տա կայուն գիտելիք,

♣կարողանա կանխատեսել գործունեության տարբեր ձևերի ազդեցությունը սոցիալականացման և անձնային որակների ձևավորման վրա,

♣ձևավորի և զարգացնի սովորողների լեզվամտածողությունը,

♣նպաստի վերջիններիս սոցիալական հմտությունների զարգացմանը:

Ուսուցիչը ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն է ու իրականացնողը, սակայն նա անհատականություն է իր ուժեղ և թույլ կողմերով, աշխարհայացքով , արժեհամակարգով , որոնք հետք են թողնում ուսուցիչ- աշակերտ փոխհարաբերությունների վրա: Սակայն փաստ է , որ ուսուցման որակը մեծապես կախված է այն հանգամանքից, թե ուսուցիչը որքան է տիրապետում իր պարտականություններին, ինչքանով է պատրաստ ինքնակրթության, նոր կարողունակությունների ձեռքբերման: Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

Սովորողին լսելու նրա հետաքրքրությունների շրջանակին ծանոթանալու եղանակներից է դասի ընթացքում խմբային քննարկումներ իրականացնելը: Այս եղանակով ուսուցիչը նաև նպաստում է սովորողի լեզվամտածողության զարգացմանը, քանի որ քննարկումների ընթացքում սովորողներն առավել ակտիվ են՝ հարցնում են , պատասղանում, բանավիճում:

Ընդունված է ասել, որ մարդը մտածում է լեզվով: Թվում է, թե մտածելն ու խոսելը, մտածողությունն ու լեզուն առանձին գոյություն ունեցող երևույթներ են, և ցանկացած պահի հնարավոր է դրանք տարանջատել: Սակայն դա այդպես չէ. մտածողությունն ու լեզուն հանդես են գալիս համատեղ, և գործնականում ու բնականորեն անհնար է զատորոշել, թե ինչ է լեզուն որպես առանձին երևույթ, և ինչ է մտածողությունը որպես մեկ այլ երևույթ: Հնարավոր չէ խոսել և չմտածել: Իսկ եթե մտածում ես, ուրեմն խոսում ես, քանի որ մտածելը հենց խոսելն է: Մտածում ես խոսելով և խոսում ես մտածելով, թեև հնարավոր է՝ սխալ մտածես. չկա առանձին լեզու, և չկա առանձին մտածողություն:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ խմբային քննարկումների ժամանակ զարգանում է ոչ միայն սովորողի լեզուն, այլ նաև լեզվամտածողությունը՝ հնարավորություն տալով սովորողին կշռադատել, դասդասել, գտնել նմանություններն ու տարբերություններն, ուսումնասիրվող թեմային տալ սեփական գնահատականները, քննադատաբար մոտենալ այս կամ այն բացասական երևույթին: Արդյունքուն զարգանում է նաև քննական մտածողությունը:

Սովորողների հաղորդակցական կարողությունները ձևավորվում են հատուկ իրավիճակներ ստեղծելու ճանապարհով, որոնք առանձնանում են իրենց բնույթով, հաղորդակցման տեսակով, ուսուցողական մեծ ներուժ ունեցող տեսա-լսողական միջոցների կիրառմամբ, հաղորդակցվողների դերերով և վարքով: Բոլոր ներգործուն մեթոդները նպատակամղված են հետևյալին՝ սոցիալ-հոգեբանական ազդեցություն գործել մարդու վրա՝ նպաստելով նրա հաղորդակցական կոմպետենտության զարգացմանը և կատարելագործմանը [5]:

«Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»:

<< Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

♣ դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,

♣ բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,

♣ ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

http://ysu.am/files/06T_Tonoyan.pdf

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.



Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

- անձի զարգացում և անհատականության ձևավորում.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովում.
- սթրեսի հաղթահարում.
- առողջ փոխհարաբերությունների դրսևորում:

- *Համագործակցային* տեխնոլոգիայում *կիրառվող մեթոդները և հնարները*
- Թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Պատկերասրահում
- Խմբային հետազոտություն

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով:

Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները:

Համագործակցային քննարկում

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու:

Այս եղանակի փուլերն են՝

ա) քննարկումը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում:Այդ հայտարարությունները փակցված են սենյակի տարբեր մասերում.

բ) յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.

գ) քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը կողմ փաստարկները ներկայացնելու համար.

դ) փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին.

ե) խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված «քննարկման խաղանիշեր» (3-6 հատ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից)։

զ) խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես խաղանիշեր են ստանում: Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարկման մեջ ներգրավվելու նպատակով: Որպես այլընտրանք, խմբի անդամներն իրենց խաղանիշերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր խաղանիշերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի.

Համագործակցային ուսման հիմնական սկզբունքները

Եթե հետևյալ բոլոր սկզբունքները չեն պահպանվում, համագործակցային ուսումը տեղի չի ունենում: Չորս հիմնական սկզբունքները (Սպենսեր Կագանի համաձայն)՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝ ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ) Անձնական պատասխանատվություն՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար:

գ) Կառուցողական փոխկախվածություն՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն:

դ) Հավասարաչափ մասնակցություն՝ աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների: Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով:

Ավանդական խմբային աշխատանքը չի պահանջում համագործակցության այդքան սերտ մակարդակ, և պարտադիր չէ, որ հաջողությունը պայմանավորված լինի բոլոր աշակերտների մասնակցությամբ: Ուսման գործընթացի կազմակերպումը բաղկացած է 6 հիմնական տարրից:

https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

1. 2 ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Խումբ

- Համատեղ աշխատող խումբը բաղկացած է 3–6 մշտական անդամներից։ Խմբի անդամների միջև կապը սերտ է. նրանք ճանաչում, ընդունում և աջակցում են միմյանց։
- *Խմբի կազմը միատարր չէ՝* մասնակիցների ընդունակությունները, սեռը, համակրանքը և էթնիկական ծագումը տարբեր են



• Պարտականությունները խմբում, օրինակ՝

- *քարտուղարը* պատասխանատու է ճիշտ խոսքի համար.

- *ժամանակը հաշվառողը* պատասխանատու է ժամանակային սահմանափակումներին հետևելու համար.

– *աշխատանքների կատարման պատասխանատուն* ապահովում է բոլորի կողմից իրենց աշխատանքի պատշաճ կատարումն ու խմբում արդյունավետ հաղորդակցությունը.

– *խոսնակը* պատասխանատու է ուսուցչի հետ կապ պահպանելու համար, զեկուցում է կատարված աշխատանքի մասին և ներկայացնում կատարված առաջադրանքը։

- Խմբում առաջադրանքների բաշխումը, աշխատանքի կազմակերպումն ու կիրառվելիք մեթոդաբանության որոշումը (օրինակ՝ «Կլոր սեղան», «Բառերի շրջապտույտ», «Խճանկար» և այլն)։

Դասաժամի կառավարումը

• Դասարանը պետք է դասավորված լինի այնպես, որ աշակերտները հեշտությամբ հաղորդակցվեն իրենց խմբի մասնակիցների հետ։ Խմբային աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակը կարգավորելու համար պետք է նախապատրաստել որոշակի նշան կամ խորհրդանշան (որի շուրջ դասարանը նախապես համաձայնության է եկել)։

• Սահուն և արդյունավետ աշխատանքի համար պայմաններ ապահովելու նպատակով գործիքների տեղը և աշխատանքի վայրը պետք է անփոփոխ մնան։

Համագործակցելու նպատակը

Գոյություն ունի աշակերտների՝ համագործակցելու ցանկությանը նպաստելու և այն պահպանելու երեք եղանակ՝

- «համայնքի» (խումբ, դասարան) ձևավորում,
- համագործակցային առաջադրանքներ,
- խրախուսման և գնահատման համակարգի կիրառում:

Համագործակցելու պատրաստակամությունը



ԳԼՈՒԽ 2 : <<Սեփական փորձ; Դասի պլաններ դասավանդման համագործակցային մեթոդի կիրառմամբ>>

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ 4րդ

Դասի թեմա՝ Տարվա եղանակներ

Դասի տիպը՝ Ամփոփում

Դասի կահավորում՝ Ցուցանակներ, պաստառներ, նկարներ

Միջառարկայական կապ՝

Նկարչություն՝ նկարել սիրելի տարվա եղանակը

Երաժշտություն՝ Վիվալդի <<Տարվա եղանակները>>

Դասին կիրառվելիք մեթոդներ՝

✔ Վեննի Դիագրամ

✔ Խմբային քննարկումների մեթոդ

✔ ԳՈՒՍ

✔ Մտագրոհ

Դասի նպատակը՝

Ա. Գիտելիք

Աշակերտը պետք է իմանա տարվա եղանակները, ամիսները, տարվա եղանակներին բնորոշ հագուստների անվանումները;

Բ. Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

Սահուն ընթերցել բնագիրը,

Մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը;

Վերարտադրել ընթերցած նյութը;

Խմբային աշխատանքի միջոցով ներկայացնել տարվա 4 եղանակները;

Դասի ընթացքը՝

Վեննի դիագրամի մեթոդի միջոցով սովորողները կներկայացնեն տարվա եղանակները ու ամիսները, ապա կնշեն ամեն եղանակի բանալի բառեր։



Months, seasons and weather

What season is it? _____
What's the weather like? _____
What do you wear in _____?
_____
_____
What can you do? _____
_____

What season is it? _____
What's the weather like? _____
What do you wear in _____?
_____
_____
What can you do? _____
_____

What season is it? _____
What's the weather like? _____
What do you wear in _____?
_____
_____
What can you do? _____
_____

What season is it? _____
What's the weather like? _____
What do you wear in _____?
_____
_____
What can you do? _____
_____

Դասարանը կբաժանվի 4 խմբի , խմբերց յուրաքանչյուրին կհանձնարարվի մեկ տարվա եղանակ, որի վերաբերյալ հարկավոր է գրել բանալի բառեր՝ գուլներ, հագուստ, եղանակային երևույթներ, մրգերի անվանումներ, որոնք բնորոշ են տարվա այդ եղանակին։



Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ կամփոփի իր խմբի աշխատանքը։

Cooperative Lesson Planning Form

Subject Area; ------ Date;----------

Lesson;----------

Making Preinstructional Decisions

Academic Objections;---------

Group Siza---------- Method Of Assigning Students;----------

Roles; ----------

Room Arrangement;----------

Materials;----------

One Copy Per Person One Copy Person

Jigsaw Tournament

Other;

Explaining Task And Cooperative Goal Structure

1. Task;
2. Criteria For Success;
3. Positive Independence;
4. Individual Accountability;
5. Intergroup Cooperation;
6. Expected Behaviours;

Monitoring and intervening

1. Observation procedure;---------- Formal;---------Informal;----------
2. Observation by:----------Instructor;----------Students;----------Visitors;----------
3. Intervening for task assistance;----------
4. Intervening for teamwork assistance;----------
5. Other; ----------

Assessing and Processin

1. Assessment Of Members' Individual Learning
2. Assessment Of Group Productivity
3. Small Group Processing
4. Whole Class Processing

5. Charts And Graphs Used
6. Positive Feedback To Each Student
7. Goal Setting For Improvement
8. Celebration
9. Other

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով կատարենք մի քանի արձանագրություն՝ հիմք ընդունելով հետազոտության արդյունքները

✔ Ուսուցիչը պետք է կատարի իր մասնագիտական պարտականությունները՝ ստեղծելով համագործակցային միջավայր;

✔ Անգլերենի դասաժամին ուսուցիչը պետք է նպաստի սովորողի լեզվամտածողությանը և խոսքային կարողությունների զարգացմանը;

✔ Ուսուցիչը պետք է նպաստի սովորողի սոցիալական հմտությունների զարգացմանը;

✔ Սովորողների խոսքային մշակույթը, լեզվամտածողությունը և սոցիալական հմտությունները զարգացնելու նպատակով ուսուցիչը պետք է անկաշկանդ միջավայր ստեղծի սովորողների հաղորդակցման, մտքերի փոխանակման և կարծիքներ հայտնելու համար։

Դասի պլան

Ալի Բաբան և քառասուն ավազակները

5-րդ

Դասարան

Տևողություն

45 րոպե

Անհրաժեշտ պարագաներ

- աշխատանքային ձևաթղթեր
- կանաչ և կարմիր քարտեր

Նպատակ՝
. զարգացնել բանավոր խոսքի առոգանությունը
. զարգացնել աշակերտների ընկալունակությունը
.զարգացնել քննադատական մտածողությունը
. ամփոփել պատմվածքի իրադարձությունները
. հասկանալ և բնութագրել պատմվածքի գլխավոր կերպարներին

Դասի ընթացքում աշակերտները կամրապնդեն նոր բառապաշարը: Կկարողանան ներկայացնել դասը՝ օգտագործելով ներկա անորոշ, անցյալ անորոշ, ապառնի անորոշ ժամանակաձևերը: Աշակերտները կլուսաբանեն հեքիաթում տեղ գտած բարոյական նորմերը: Կզարգացնեն հաղորդակցման կարողություններն և հմտությունները:

1.Լիցքաթափող վարժություն 5 րոպե	Good morning everybody.... Փոխանցիր բառը

2. Ենթասկիզբ 5 րոպե	. Խնդրել աշակերտներին նայել գրատախտակին փակցված նկարներին. Կարդալ թռուցիկ ընթերցանության համար նախատեսված հատվածը հեքիաթից և համապատասխանեցնել նկարներին The Frog Prince, Cinderella, Tom Thumb, The Three Bears, Ali Baba and the Forty Thieves
3.Հարց ու պատասխան Speaking task 5 րոպե	Այստեղ ներկայացված են հարցեր տեքստի վերաբերյալ; • Do you know about Ali Baba? • What did he do when he found the jewels? • What happened to Cassim? • Who helped Ali Baba? • What did the servant put on all the doors? • What happened to the thieves?
4. Ճիշտ -սխալ 5 րոպե	• ընթերցել նախադասություններ տեքստից • խնդրել աշակերտներին բարձրացնել կանաչ քարտ, եթե ճիշտ է, կարմիր քարտ, եթե սխալ է; • Այս առաջադրանքը տեքստի ընկալումը հսկող վարժություն է, ուր ներկայացված են ճշմարիտ կամ բովանդակությանը հակասող նախադասություններ: Նպաստում է ընթերցված նյութի ամրապնդմանը, բանավոր խոսքի զարգացմանը և ունկնդրելու ընթացքում նրա ընկալմանը:
5. Բառային աշխատանք 5 րոպե աշխատանք զույգերով	Աշակերտներին բաժանել նախադասություններ բաց թողնված բառերով; Խնդրել աշակերտներին մտքում ընթերցել նախադասությունը; Ուսուցիչը ցույց է տալիս բաց թողնված բառերը; Աշակերտը բարձրացնում է նախադասությունը, եթե բաց թողնված բառը համապատասխանում է; • ստուգում է աշակերտների տեքստի ընկալման ճշտությունը և բառապաշարի իմացությունը Առաջադրանքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ այն դարձնում է լեզվի ընկալումը մեխանիկական և զարգացնում է աշակերտի լեզվական հիշողությունը;

6. Խմբային աշխատանք 5 - 8 րոպե	• կազմել 4 խումբ • խմբերին բաժանել ձևաթուղթ՝ խառը տրված բառերով. • խնդրել աշակերտներին կազմել նախադասություններ տրված բառերով Զարգացնում է խմբով աշխատելու կարողությունը Ստուգում աշակերտների լեզվամտածողությունը;
7 Բեմականացում 10 րոպե	Ali Baba and the forty thieves

8Ամփոփում (5րոպե)	Քննարկում

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:

2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայա- թյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:

4. Համագործակցության մանկավարժություն (Վ.Շատալով, Մ.Շչետինին, Ն.Գուզիկ, Ս.Լիսենկովա) Խորհրդային

http://gspi.am/media/journal/2014n1b/